

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԶԳԱԿԱԳՈՒԹԻՒՆ

(իմ վերջին խօսքը պ. Ն. Ք. ին)

Le masque tombe, l'homme reste,
Et le héros s'évanouit.

J. B. Rousseau

«Մուրճ» ամսագրի ապրիլի համարում տպւած իմ «Քննադատներին» վերնագրով լօգւածը, որով ես պատասխանում եմ ի միջի ալոց պ. Ն. Քարամեանին, ալնքան խղճալի գրութիւն ստեղծեց մեր պատկերադարձ շաբաթաթերթի աշխատակցի համար, որ նրան մնում էր կամ լռել, կամ ազնւաբար խոստովանել իմ արած նկատողութիւնների ճշմարտութիւնը, կամ խիղճ և ամօթ մոռացած, դիմել զրպարտութիւնների և հակոյանքների Գերադասելով վերջին միջոցը, պ. Քարամեանը «ազնւութեան և համեստութեան» քօղով ծածկւած մի «պատասխան» է հրատարակել «Արձագանք»-ի № 14 մատենախօսական բաժնում: Բացի պատասխանից, ինչ ուզէք, կը գտնէք ալը «պատասխանում»: Պարոնը հաւատացնում է որ ես կարծում եմ թէ միայն ինքս եմ զբաղւել «Բուզանդարանի» խնդրով և ինքս միայն իրաւունք ունիմ նորա մասին խօսելու. իբր թէ ինձ «պարագրել է» ալն հանգամանքը որ ոմանք աշխատել են պարզել իմ շօշափած խնդիրները. ես չանդգնում եմ կարծել թէ ինձանից առաջ ոչ ոք չէ խօսել հայկական մատենադրութեան մասին և ինչ որ իմ գրքովի լուս տեսնելուց չետու ասւել է, ալնտեղից է գողացած. ես տգէտ եմ, անհամեմատ եմ, անազնիւ եմ, մեծամիտ եմ...

Համեմատ և ազնիւ պարոն Քարամեանի «պատասխանից» մննք տեղեկանում ենք որ նա երբեմն աշխատակցել է «Արեւելեան Մամուլին», ճանապարհորդել է արեւմտեան Եւրոպայ եղել է Դուռնշտիդի աշակերտը, ծանօթ է Վիեննայի և Վենետիկի մխիթարեան վարդապետների հետ, որոնք պատրաստ են վկայել իրա գիտնականութիւնը, այժմ Ներսիսեան զպրոցում գրականութեան ուսուցիչ լինելով, կարող է իւր նախկին աշակերտներին խնդրել որ իրանց բաղմերախտ վարժապետին գովեն, իսկ ինչ վերաբերում է հալոց մատենագիրներին և մանաւանդ Փաւստոսին, պ. Ք. միայն «ի պաշտօնէ է ոտխրւալ» զրանց զրւածները քննելու, և կարծում

է թէ փաւստոսին ուսումնասիրելու փոխարէն՝ լաւ կը լինէր «Ֆաուստ»-ից ձախ ձեռքով հաւաածներ արտագրել... Առհասարակ, պատկերազարդ շարաթաթերթի աշխատակցի ալս գրութիւնը ալեքան թանկագին ինքնակենսագրական Նիւթեր է բովանդակում, որ մենք չենք կարող խորհուրդ չը տալ Նոյն թերթի աշխատակից պ. Ա. Երիցեանին (որ ալժմ զբաղւած է հալոց պատմութեան համար Նիւթեր հրատարակելով) օգտուել մեր համբաւատենչ գիտնականի աւտոբիօգրաֆիական ակնարկներին՝ նորա մանրամասն կենսագրութիւնը կազմելու համար: Խոստովանում եմ, ես հետաքրքրութեամբ կարդացի պ. Գ. ի ալզ ինքնակենսագրական ակնարկները և սրտանց ցաւեցի որ ինձ հայհոյելու և զրպարտելու գնով է Նա ժողովրդականացնում իւր անունը. ինձ թւում է թէ աւելի նպատակաւոր մար կը լինէր «Արձագանք»-ի նոյն համարում զետեղել նաև իւր պատկերը... Իսկ Գանք գործին:

Եւ ապացուցել եմ որ պ. Քարամեանը չանդէպս մէջ բերելով Ղապար փարպեցու չառաջաբանի վաւերականութեան խնդիրը, սնափառութիւնից դրդւած, ստում է թէ «ոչ ոք» իրանից առաջ չէ նկատել ալզ չառաջաբանի անկապ և մասամբ կասկածելի լինելը,—ալն ինչ ալզ նկատել է պ. Գ. Խալաթեան իւր «Ղազար փարպեցի» աշխատութեան մէջ, Պ. Քարամեանը, որ ի հարկէ չի կարող ուրանալ ալզ իրողութիւնը, կարևոր է համարում ինձ որպէս «ղարոցական աշակերտի» բացատրել թէ ինչ նշանակութիւն ունին «մերձաւոր ժամանակի մատենագիրների վկայութիւնները» որ և է հեղինակի քննադատութեան խնդրում, իսկ գալով իմ նկատողութեան բուն իմաստին, ձգնում է արդարանալ հետեւեալ սոփեստական առարկութիւնով. «Թէ պ. Գ. Խալաթեանը արդէն չարուցել է ալզ խնդիրը և ես ասել եմ՝ թէ ոչ ոք ուշադիր չէ եղել զրան, ալզ պէտք է պ. Մ. (Նաւաստ) հասկանար, որ վերաբերում է փաւստոսի քննաբաններին, որոնք սկզբից մինչև պ. Մ. հիմնուել են մի հեղինակի ալնպիսի խօսքերի վերալ, որ վաւերական չեն»։ Ինչպէս տեսնում էք, պ. Քարամեանը գիտէ դէպքից օգտուել. ինձ՝ «ղարոցական աշակերտիս» Նա վերագրում է Նաև մարգարէական ձիրք, միայն թէ ինքը ողջ դուրս գալ կռիւ դաշտից: Բայց աւանդ, չարաչար սխալւել է ազնիւ պարոնը: Նախ, Նա չի ապացուցանում և չի էլ կարող ապացուցանել որ փարպեցու չառաջաբանի մէջ եղած փաւստոսին վերաբերեալ տողերը փարպեցունը չեն: Երկրորդ, Նա չի հասկանում, որ եթէ ալզ տողերի անվաւերականութիւնը ապացուցւած էլ լինի, զրանից չի վրիպւել Նրանց միտքն ու արժէքը. փարպեցի չը լինէր ալզ տողերի հեղինակը, Կարբեցի լինէր,—մի և Նոյն է. ուրիշ բան է, եթէ պ. Քարամեանը հաստատէ որ ալզ տողերը երէկ կամ անցեալ օրն են ներմուծւած փարպեցու բնագրի մէջ և ոչ թէ հարկւրաւոր տարիներ մեզանից առաջ: Պնդելով որ փաւստոսի քննաբանները ոչինչ չեն ասել փարպեցու չառաջաբանի անկասկածելի լինելու մասին, պ. Քարամեանը նորից ապացուցանում է որ սի-

րում է չիմացած բաներից աւտօրիտէտի նշանակով խօսել: Փաւստոսի քննաբաններից՝ Ղազարի լաւաջաբանի մասին գրել է պ. Նորայր Բիւզանցին իւր «Հաշկական բառաքննութիւն» աշխատութեան մէջ. գրել է և տողերիս գրողը «Հանդէս Ամսօրեայ» ամսագրի 1987 թ. համարներից մէկում: Տեսնում էք, գիտնական պ. Քարամեան, որ ձեռնարկից առաջ էլ՝ գոնեա երեք հոգի շօշափել են ձեր լանդէպս լարուցած խնդիրը: Ո՞վ է մեզանից «աշակերտ հեղգ առ ուսումն և փոյթ առ ՚ի վարդապետել», դատեցէք:

Երանօթութեան մէջ ես նկատել էի որ պ. Քարամեանը «Արձագանք»-ի № 3-ում հրատարակած նամակի մէջ դիտմամբ թագցնում է ալն իրողութիւնը որ պ. Խալաթեանը, ինչպէս քիչած է «Արձագանք»-ի № 1-ում, Անգեղի աստուած լինելը ապացուցանելու համար ի միջի ալոց լիշատակում է նաև Սերէոս պատմագրի անունը, որ նույնպէս «Անգեղին աստուած է կոչում»: Պ. Քարամեանը, որ իւր՝ նամակում ստում էր թէ թերթերի աւած զեկուցումների մէջ «չը կալ (?!) զխաւոր ապացուցութիւնը», ալն է Սերէոսի վկայութիւնը, ալժմ հայերէն հասկանալու ընդունակութիւն չ'ունեցող անձանց ուզում է համոզել, որ ինքը կամեցել է միայն բողոքել «թերթերի մէջ եղած զեկուցման վերնագրի» ՆՈՐ աստուած բառի դէմ: «Իսկ ալն ժամանակ ինչ հարկ կար ծածկել Սերէոսի անունը և նորից լոյս աշխարհ հանել, որպէս սեպհական ճարտարութեան գիւտ: Աչքակապութիւն չէ ալս, ինչ է հապալ Սթէ պ. Քարամեանը ուղում էր ցուց տալ որ պ. Խալաթեանի կարծիքը նոր չէ, դորա համար ոչ թէ պ. Խալաթեանի քիչած վկայութիւնը պէտք էր նորից մէջ բերել, ալ, օրինակ, «Քննական Պատմութիւն» հեղինակի հետեւալ խօսքերը. «բոլորովին կամայական է Անգեղ բառը տգեղ նշանակութեամբ առնելով, վաղարշակալ Անգեղ, աչսինքն Տգեղ կոչել տալ զՏորք, և լանուն նորա զազգն Անգեղ տուն, աչսինքն Տգեղ տուն: Անգեղ թուի լինել հին Հալ գիւցազին կամ աստուածութեան անուն, Մեր նախնիք սովոր էին Հալոց աստուածներուն անամբ կոչել, ըստ լարմարութեան, օտարազգի գիւ. զորօրինակ. զՕրինոն՝ Հալի, զՀերակլէս՝ Վահագն, զԱրտեմիս՝ Անահիտ, զԱփրոդիտէ՝ Աստղիկ, զԱպոդոն՝ Տիւր, զՀեփեսոսոս՝ Մհհր. ալսպէս Անգեղ կը թարգմանեն հին Քուշեանց և Սեմականաց Ներկալ կամ էրկէլ (Հերակլ, Հէրքիւլ) աստուածը, որ կը չիշուի ի չորրորդ գիրս թագաւորաց (ԺԷ. 30). Հաւանական է, թէ ինչպէս Քուշեանց և Սիմականաց Ներկալը կամ էրկէլն (Բոպինս. Բուրն՝ գրոց), նույնպէս Հալոց Անգեղն պատերազմի սոսկումն էր անձնաւորեալ ալլաբանօրէն ի հսկալ անճոռնի, կաշմբուռն և աւերիչ. ինչպէս նախկին մարդկութեան պատերազմն ընդ գազանս՝ անձնաւորեալ էր ի Հերակլէս հսկալ գազանաւարտ» և ալն:

(«Քննական Պատմութիւն Հայոց» Վ. Մ. Գարազեան, մասն ա. երես 253—254 ¹⁾).

Եւս ապացուցել եմ որ պ. Քարամեանը ինձ լանդիմանելով որ Փաւստոսի ձեռագրերի մասին քիչ եմ խօսում, ինքը իւր կողմից ոչինչ չի ասում ալդ ձեռագրերի մասին, որ ես ասած չը լինէի։ Նեղըն ընկած, նա ալժամ խօսքը կտուրն է ձգում, զրպարտելով իւր թէ ես նշանակութիւն չեմ տալիս գրչադրերի ուսումնասիրութեան, չարամտութեամբ լռութեան տալով ալն հանգամանքը որ ես կարողութեանս չափ ուսումնասիրել եմ Էջմիածնի ձեռագրերը, և տղալամիտ պարծենկոտութեամբ 'ի լուր աշխարհի ծանուցանում է որ ինքը վեներտիկ է եղել, սուրբ Ղազար է եղել և հիւնդ ձեռագիր է ուսումնասիրել։ Բացատրեցէք 'ի սէրն Քրիստոսի, հետեւում է արդեօք զրանից թէ նա իմ գրքովի քննադատութեան մէջ Փաւստոսի ձեռագրերի մասին ինձ մի նոր տեղեկութիւն է տւել։ Եւ ալդ տեսակ գրականական աչքակապները, որոնք անուններով թող փչել գիտեն միայն հասարակութեան աչքին և *gloriarī alienis bonis*,—լանդգնում են ճառել գրականական համեստութեան և ազնւութեան մասին։

Եւս ապացուցել եմ, որ պ. Քարամեանը գիտմամբ ծածկում է ընթերցողներէրից իմ գրքովիս մէջ փշտակած ալն հանգամանքը որ Խորենացու հեղինակութիւնը անհամեմատ աւելի բարձր է եղել մեր մատենագիրների աչքում, քան Փաւստոսինը («Մուրճ», № 4, եր. 602), ծածկում է, որպէս զի իւր բերանից նոյնը ասելով, ցուց տալ միամիտներին որ ալդ՝ հազար անգամ գանազան լեզուներով փշղելուած կարծիքը իւր՝ գիտնական պարոն Քարամեանի գիտն է... Իմ անխնայ մերկացման դէմ ոչինչ չը գտնելով ասելու, պ. Քարամեանը ալժամ փշղաշղում է իմ խօսքերը՝ իւր թէ ես ասած լինեմ թէ ինքը ինձանից է «ուսել» Խորենացու «նշանակութիւնը» և պարծենում է իւր «անմոռանալի ուսուցիչ» Գոռտշմիղի անունով, որպէս զի մի անգամ ես հաստատէ «Յեցերի» հեղինակի ալն միտքը՝ որ արժանաւոր ուսուցիչը կարող է ունենալ անարժան աշակերտներ... Գոռտշմիղը 'ի հարկէ լարգելի գիտնական է, Խորենացու մասին նրա արած խիստ քննադատութիւնը շատ կողմից նշանաւոր է, բայց որ պ. Քարամեանը քրթողահօր ալդ անոգոք կրիտիկոսից լինի ուսած հալ

¹⁾ Մենք չենք կասկածում որ պ. Խալաթեանին ծանօթ է Գարազեանի կարծիքը։ Սակայն աւու գիտնականները, որոնց աւաջ պ. Խալաթեանը կարգացել է իւր ռեֆերատը, ընկալանալար կարող էին տեղեկութիւն չունենալ Անգլիկ աստուածութեան մասին, քանի որ պ. Լմիւնի «Очеркъ религіи изысчегныхъ армянъ» աշխատութեան մէջ չի յիշած այդ անունը։ Այս տեսակէտից, պ. Խալաթեանը կատարեալ իրաւունք ունէր ընտրաբար աստուած անուանել Անգլիկը, թէ եւ 'իտի իսկ հայ բանասէրներից շատերի համար նորութիւն չէ այդ կարծիքը։ Սամեանայն դէպս, ոչինչ չի կարող արդարացնել պ. Քարամեանին, որ յանդգնում է պնդել թէ ես կամեցել եմ պաշտպանել մի անձի որ ամենեւին կարօտ չէ իմ պաշտպանութեան։

Հերոդոտի «հեղինակի բարձրութիւնը և մեծ նշանակութիւնը» — մենք չենք հաւատում: Մեր հռչակաւոր գիտնականը ինքն իրան զրպարտում է այդ խոստովանութիւնով:

Ես, ապացուցել եմ որ պ. Փարամեանը համեմատաբար չէ ուսումնասիրել Բուզանդարանը և Մեսրոպ երէցի երկասիրութիւնը, այլ սեփականել է իմ արած բաղդատութիւնը: Պ. Փարամեանը խորին լռութիւն է պահպանում իմ բերած փաստերի մասին և ինձ զինաթափ անելու համար հրաւիրում է ինձ Բագուից գալ Թիֆլիզ և իւր զրադարանում ստուգել իւր արած համեմատութիւնը: Հարցնում եմ ազնիւ պարոնից 1) ինչո՞ւ ես չ'արաւ ինձ ալզ հրաւերը, երբ ես Թիֆլիզ էի և իմ պատասխանը հրատարակելուց չետոյ՝ առիթ էի ունեցել իւր հետ խօսակցելու, 2) ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ իմ Թիֆլիզ գալը, երբ ինքը պ. Փարամեան «Արձագանք»-ում արդէն վկայել է որ իւր «թեթեակի» համեմատութիւնից տոն եզրակացութիւնն է դուրս բերել, որ Մեսրոպ արտագրել է Բուզանդարանից միայն մի հատւած, — և ես հերքել եմ այդ կարծիքը: 3) ինչո՞ւ ես չի պատասխանում իմ առաջարկած հարցին՝ օգտուել է Մեսրոպ բացի Փաւստոսից նաև ուրիշ աղբիւրներից, թէ ո՛չ:

Ո՛չ, պ. Փարամեան, ո՛չ ձեր անմոռանալի ուսուցիչները, ո՛չ Մխիթարեան հայրերը, ո՛չ ձեր նախկին և աշտմեան աշակերտները, ո՛չ ձեր ամբողջ զրադարանը և անտիպ «խակ» գրածները չեն կարող ոչ ոքի համոզել որ ձեր վարմունքի անուճը ալ է քան թէ գրական կանաչ քաղապուծիւն:

Ե. ՄԱՂ.

